

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աբրահամյան Ռիմա Հակոբի

Ռիսկերի ապահովագրության կառավարումը գյուղատնտեսական
կազմակերպությունում («Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի օրինակով)

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտանա ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգիս Լևոնի Ղանթարջյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Սերյոժայի Ավետիսյան

տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ
Վարդան Սամվելի Ալեքսանյան

Առաջատար կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2013թ. Հունիսի 12-ին ժ.
13.30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտություն թիվ 015
մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Խ. Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղնագիրն առաքված է 2013թ. Հունիսի 11-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ.գիտ. դոկտոր

Ա.Յ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտվող թեմայի արդիականությունը: Ձեռնարկատիրական գործունեությունը, ինչպես նաև գործունեության այլ տեսակներ, օբյեկտիվորեն կապված են ռիսկերի բազմազանության հետ: Հայտնի է, որ ցանկացած գործունեության արդյունավետությունը կախված է բազմաթիվ գործոններից և պայմաններից, որոնց ազդեցությունը գործունեության արդյունքների վրա անհնար է որոշել նախօրոք: Ռիսկերի հետազոտությունը դարձել է ժամանակակից տնտեսագիտական հետազոտությունների կարևորագույն ուղղություններից մեկը:

Այդ ռիսկերի ցանկում հատուկ տեղ են գրավում գյուղատնտեսական ռիսկերը: Չնայած այն հանգամանաքին, որ մարդիկ միշտ էլ ապրել են ռիսկային պայմաններում, որոնք իրենցից կախված չէին, ուստի նրանք սկսեցին կատարել ռիսկերի հետազոտումը և կառավարումը բավականին բարձր մակարդակի վրա միայն այն ժամանակ, երբ ստեղծվեցին պայմաններ, որոնք թույլ էին տալիս ազդել իրավիճակների վրա և ունեին ռիսկային բնույթ:

Անհրաժեշտ է նշել, որ մշակվեցին ռիսկերից խուսափելու, նվազեցնելու և նրանց փոխանցման մեխանիզմներ: Վերջիններիս թվին է դասվում ապահովագրությունը, որը նպաստում է գյուղատնտեսական կազմակերպությունների ֆինանսական կայունությանը և դրանց շահութաբերության պահպանմանը:

Նախկին ԽՍՀՄ-ում գյուղատնտեսական ձեռնարկությունների ունեցվածքի ապահովագրումը կատարվում էր պարտադիր կերպով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ համակարգը նույնպես փլուզվեց և անկախություն ձեռք բերած նորաստեղծ պետությունները փորձում են մշակել ապահովագրման և ռիսկերի կառավարման այնպիսի համակարգեր, որոնք հաշվի են առնում տվյալ երկրին բնորոշ բնակչի մայակական պայմանների:

Հայտնի է, որ Հայաստանի տարածքն ամբողջությամբ ենթակա է բարձր ուժգնությամբ երկրաշարժերի, հողատեսքերի շուրջ 50 %-ը ենթակա է հողատարման, 20 %-ը՝ գերխոնավության, 30%-ը՝ սելավների և ջրհեղեղների, 17 %-ը՝ կարկտահարման, 3%-ը՝ սողանքների (ավելի քան 2500 սողանք, որից 300-ը բնակեցված տարածքներում), 0,5%-ը՝ փլուզումների (քարաթափումների): Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ գյուղատնտեսության խոցելիությունը պայմանավորված է նաև հարաբերական սակավահողությամբ (2011 թ. հողային հաշվեկշռով վարելահողերը կազմել են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի 21,63 %-ը), ջրային ռեսուրսների սակավությամբ, ներդրումների անբավարարությամբ և մի շարք այլ գործոններով, ապա պարզ է դառնում, որ ապահովագրությունը պետք է դառնա ոչ միայն ապրանք արտադրողների ունեցվածքի պահպանման գործիք, այլ նաև պահպանի այն ներդրողների շահերը, որոնք շահագրգռված են ճյուղի ինովացիոն զարգացման հարցում: Այս ամենը հիմք հանդիսացավ ատենախոսության թեմայի ընտրության համար:

Հիմնախնդիրների ուսումնասիրության աստիճանը: Տնտեսական մտքի զարգացման պատմությունը տարբեր դպրոցների հետազոտողների ուշադրությունը մղում է տնտեսական համակարգի գործունեության և զարգացման կայուն հիմնախնդիրներին: Տնտեսության անկայունության

գործընթացները, ռիսկերը, որոնք ծագում են գործունեության ընթացքում ծառայել են հետազոտման օբյեկտներ դեռ այնպիսի դասական տնտեսագետների մոտ, ինչպիսիք են Կ. Մարքսը, Մ. Դժ. Քեյնսը, Ա. Մարշալը:

Ռիսկի կառավարման հարցերը, որոնք վերաբերվում էին ագրոտնտեսական կոմպլեքսին (ԱՏՀ), հետազոտվել էին արտասահմանյան այնպիսի տնտեսագետների աշխատանքներում, ինչպիսիք են Պ. Լ. Բերիստեյնը, Ռ. Կենդալը, Մ. Խ. Մեսկոնը, Դ. Ռիկարդոն, Ա. Սմիթը, Գ. Սայմոնը, Ի. Շումպետերը: Նրանք իրենց աշխատանքներում վերլուծել են հասարակական համակարգի կայուն գործունեության տարբեր տեսակի խնդիրներ, ինչպիսիք են անձնական, խմբակային, դասակարգային, հասարակական հետաքրքրությունները, դրանց համաձայնեցման մեթոդները և ձևերը: Տնտեսական համակարգի կայունության հիմնական խնդիրները ՌԴ ագրարային հատվածի գործունեության համար երկրի բարեփոխման պայմաններում վերլուծել են Է. Ն. Կրիլատիխը, Ի. Տ. Բալաբանովը, Վ. Վ. Վիտլինսկին, Ա. Գ. Կրասնիկովը, Ա. Մ. Խալիմբեկովան, Ն. Յու. Օրեխովան, Յ. Վ. Լիսենկոն, Կ. Ն. Նազարենկոն, Է. Սվոխոնսկին, Ա. Ս. Օրսքինսկին, Ա. Վ. Նիկիտինը: Վերջին տարիներին ապահովագրությանը վերաբերող առանձին հիմնախնդիրները հետազոտել են նաև մի շարք հայ հեղինակներ՝ Գ. Այվազյանը, Ա. Դուդունցը, Կ. Աբգարյանը, Թ. Թորոսյանը, Ա. Մարկոսյան, Զ. Սարգսյանը, Ա. Քոսյանը, Է. Ղազարյանը, Ա. Փաշինյանը: Նրանց աշխատանքներում արտացոլվում են ռիսկի կառավարման և ապահովագրության տեսական և պրակտիկ հարցեր, որոնք մեր կարծիքով կարելի է դասել երկու հիմնական ուղղությունների՝ ինչպես կառավարել ձեռնարկության գործունեությունը ռիսկերի պայմաններում և որքանով ձեռնարկության ղեկավարը պատրաստ է ընդունել այդ ռիսկը:

Առաջին ուղղությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ստեղծել ռիսկերի քանակական գնահատման ֆինանսական ցուցանիշներ, իսկ երկրորդ ուղղությունը բախվում է գյուղատնտեսական ձեռնարկության ֆինանսական անկայունությանը:

Սակայն տնտեսագիտական գրականության մեջ այսօր բացակայում է միասնական մոտեցումն այս ուղղությունների զարգացման վերաբերյալ, ոչ պատշաճ ուշադրություն է հատկացվում հայտնի մեթոդների օգտագործմանը՝ ռիսկերի հիմնավորման և կառավարման համար:

Այս պրոբլեմի հրատապությունը և գործնական նշանակությունը, հեղինակի աշխատանքային փորձն այս ոլորտում որոշիչ դարձան ոչ միայն ատենախոսության թեմայի ընտրության, այլ նաև նրա նպատակի, խնդիրների և կառուցվածքի համար:

Չետագոտության հիմնական խնդիրներն են՝

- Բացահայտել գյուղատնտեսական ռիսկերի տեսական բովանդակությունը, հայտնաբերել նրանց կառավարման ձևերը.

- Հիմնավորել ապահովագրության պետական օժանդակության անհրաժեշտությունը, ներկայացնելով վերջինս որպես պետական կարգավորման գործիք.

- Հետազոտել գյուղատնտեսական ռիսկերի զարգացման հիմնական փուլերը, բնութագրելով ժամանակակից սկզբունքները.

- Հայտնաբերել հեռանկարային ուղղությունները՝ օգտագործելով օտարերկրյա փորձը.

- Նկարագրել ռիսկերի գնահատման քանակական մեթոդները, շեշտը դնելով ինֆորմացիայով ապահովված ցուցանիշների հաշվարկի վրա.

- Որոշել ուսումնասիրվող օբյեկտի ֆինանսական կայունությունը և մշակել ռիսկային ենթահամակարգի կառուցվածքը.

- Հիմնավորել և առաջարկել այն միջոցառումները, որոնք ռիսկի պայմաններում պետք է հաշվի առնվեն ձեռնարկության գործունեությունը պլանավորելու ժամանակ:

Այս խնդիրներին զուգահեռ պարզաբանվել են մի քանի տեսական դրույթներ, որոնցից կարելի է նշել՝

1. ապահովագրման բոլոր տեսակների էության բացահայտումը.
2. գյուղատնտեսության մեջ ապահովագրական ռիսկերի հայտնաբերումը.
3. ժամանակակից գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համաշխարհային շուկայի տեսությունը.
4. գյուղատնտեսական ռիսկերի կառավարման և գնահատման մեթոդաբանական հարցերի մշակումը.
5. ռիսկերի քանակական գնահատման առանձին ցուցանիշների ընտրությունը.
6. ձեռնարկության ֆինանսական կայունության սահմանների որոշումը.
7. կառավարման ենթահամակարգերի գործունեության հիմնավորումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության առարկան են այն տնտեսագիտական հարաբերությունները, որոնք ծագում են գյուղմթերքներ արտադրողների, ապահովագրական բիզնեսով զբաղվողների և պետության միջև կառավարման տարբեր մակարդակների միջև: Որպես հետազոտության օբյեկտ ընտրվել է Արզնու տոհմային «ԹՏԽ» ԲԲԸ-ն, որը միավորել է իր կազմում մի քանի կազմալուծված տնտեսություններ և զբաղվում է թռչնաբուծությամբ, խոզաբուծությամբ, տավարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամթերքի արտադրությամբ:

Ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել բազմաթիվ տնտեսագետ գիտնականների աշխատությունները: Որպես մեթոդաբանական հիմք ծառայել են տնտեսագիտական հետազոտություններում օգտագործվող վերլուծական, մոնոգրաֆիկ, մոդելավորման, տնտեսավիճակագրական և նորմատիվային մեթոդները:

Որպես ատենախոսության տեղեկատվական բազա օգտագործվել են տարբեր մակարդակների իրավական և վիճակագրական տեղեկագրեր, որոնք 2007 - 2011 թթ. ընթացքում ներկայացվել են ուսումնասիրվող օբյեկտի կողմից ՀՀ վիճակագրական վարչություն:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը այն, է որ առանձին բազմապրոֆիլային գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեության արդյունքների հիման վրա մշակվել և ստուգվել են հետևյալ տեսական, մեթոդական և գործնական արդյունքները, որոնք մեր

կարծիքով կարելի է համարել ներդրում արտադրական ռիսկերի կառավարման գործընթացում: Դրանք են՝

1. Եշտված են տնտեսական ռիսկի կառավարման տեսական հիմքերը:

2. Տրված է կազմակերպության տնտեսական և ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների գնահատականը:

3. Հիմնավորվել է այն ցուցանիշները, որոնց օգնությամբ կարելի է ճիշտ հաշվարկել ձեռնարկության ֆինանսական կայունությունը:

4. Մշակվել և իրագործվել է մեթոդական մի մոտեցում, որը թույլ է տալիս բարձր ճշտությամբ կանխագուշակել ձեռնարկության գործունեության արդյունքները ռիսկի պայմաններում:

5. Ուսումնասիրվող օբյեկտի համար մշակված են ռիսկերի կառավարման տարբեր սխեմաներ:

Միևնույն ժամանակ ատենախոսության մեջ առաջարկվել են և մշակվել այնպիսի դրույթներ, որոնք թույլ են տալիս կատարել բազմաճյուղային գյուղատնտեսական ձեռնարկության համար ռիսկերի կառավարման համալիր գիտատեսական հետազոտություն: Դրանցից ամենակարևորներն են՝

- Եշտված է ռիսկերի տնտեսական էության հասկացությունը
- Մշակված է ռիսկերի հետազոտման այնպիսի մեթոդաբանություն, որը հիմնված է համակարգչային վերլուծության վրա

- Մշակված են ռիսկերի կառավարման տարբեր սխեմաներ և ընտրված է այնպիսինը, որի հիմքում ընկած է ձեռնարկության ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը

- Որոշված է, որ ֆինանսական կայունության ցուցանիշը գտնվում է սերտ կապի մեջ ձեռնարկության ռիսկային ցուցանիշի մեծությունից

- Մշակված է մեթոդական և հայեցակարգային կոնկրետ մոտեցում բազմաճյուղային գյուղատնտեսական ձեռնարկության ռիսկերի կառավարման գործընթացը բարելավելու համար:

Ատենախոսության տեսական և կիրառական մշակությունը:

Հետազոտության արդյունքում մշակված են գործնական երաշխավորություններ ռիսկերի կառավարման գործընթացի համար գյուղատնտեսական ձեռնարկությունում: Ատենախոսության արդյունքային դրույթները կարող են օգտակար լինել գյուղատնտեսական ռիսկերի կառավարման ու ապահովագրության բնագավառներում քաղաքականություն մշակող կառույցների, ինչպես նաև ատենախոսության թեմային առնչվող գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող մասնագետների ուսումնասիրությունների համար: Միևնույն ժամանակ առաջարկված մեթոդները և առաջարկությունները, որոնք առկա են ատենախոսությունում, կարող են օգտագործվել այլ գյուղատնտեսական ձեռնարկություններում և ուսումնասիրվեն բուհերում «Ագրարային սեկտորի էկոնոմիկա», «Գյուղատնտեսության ֆինանսներ և ապահովագրում» ուսումնական դասընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարման և

գործարարության» ամբիոնի սեմինարներում: Հեղինակի մի շարք առաջարկություններ և երաշխավորություններ ընդունվել են ներդրման համար Արզնու տոհմային ԹՏԽ-ի թոշնաբուժական համայնքի գործունեությունը բարելավելու նպատակով: Ատենախոսության արդյունք- ները հրապարակվել են երեք գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 115 մեքենագիր էջերի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, նկարագրվում է պրոբլեմի ուսումնասիրության աստիճանը, հետազոտության հիմնական խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, հետազոտության հիմնական արդյունքները, դրանց գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ռիսկերի կառավարման տեսական և մեթոդական հիմքերը գյուղատնտեսության մեծ» գլխում նկարագրված է ռիսկերի կառավարման և գյուղատնտեսության ապահովագրության փորձը զարգացած երկրներում բացատրվում է թե ինչպես ապահովագրությունը ծառայում է որպես գյուղատնտեսության պետական կարգավորման գործիք և շարադրվում է, թե ինչպես կատարվել է ապահովագրության գործընթացի զարգացումը ՀՀ գյուղատնտեսությունում:

Հայտնի է, որ ռիսկերի առանձնահատկությունները գյուղատնտեսությունում պայմանավորված են հենց այդ ճյուղի առանձնահատկություններով:

Գյուղատնտեսությունում արտադրական գործընթացը կապված է բույսերի և կենդանիների աճի հետ, որոնց կենսագործունեությունը մեծ մասամբ կախված է բնակլիմայական պայմաններից և այն կենսաբանական օրենքներից, որոնցով զարգանում են: Հենց դրանով էլ կարելի է բացատրել գյուղատնտեսական արտադրության վրա ազդող այն բացասական երևույթները (ցրտահարություն, կարկտահարում, երաշտ, հեղեղ), որոնց ի հայտ գալու տեղը և ժամանակը անհնար է կանխատեսել:

Համաճարակների բռնկումները կարող են զգալի կորուստներ հասցնել անասնաբուծության և բուսաբուծության ճյուղերում, իսկ եթե բացակայում են համապատասխան ծավալի անհարաժեշտ միջոցներ վնասատուների դեմ պայքարը կազմակերպելու համար, ապա սպասվող կորուստի չափը զգալիորեն կավելանա:

Գրականության մեջ առանձնացվում են մի շարք ընդհանուր մոտեցումներ այնպիսի միջոցներ մշակելու համար, որոնք թույլ կտան նվազեցնել ռիսկի ազդեցությունը գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա: Այսպես, Կ. Նազարենկոն առաջարկում է, որ որպես ապահովագրի հանդես գան ոչ միայն գյուղատնտեսական ապրանք

արտադրողները, այլ նաև արդյունաբերական ձեռնարկությունները: Ընդ որում, գյուղատնտեսական ապրանք արտադրողի ձեռնարկատիրական ռիսկն անհամեմատ ավելի բարձր է, քան ռիսկի նույն կատեգորիան արդյունաբերության մեջ:

Ատենախոսությունում ուշադրությունը բևեռվում է այն փաստի վրա, որ երբ 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկզբին սկսվեց պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը, կտրուկ փոխվեց դրանց սեփականության պահպանման մոտեցումը, երբ ծագում էին արտակարգ իրավիճակներ: Պետությունը այլևս չունեի համապատասխան միջոցներ, որպեսզի կարողանար փոխհատուցել կորուստները:

Ռիսկի նվազեցման խնդիրների լուծումը ուղղված է գյուղատնտեսական մթերքներ արտադրողների գործունեությունից կայուն ֆինանսական արդյունքներ ստանալու համար:

Ատենախոսությունում փորձ է արվել մոտիկից ծանոթանալ գյուղատնտեսական կուլտուրաների (այնուհետև ԳԿ) ապահովագրության համակարգի զարգացման միտումների հետ և պարզել, թե ինչպես կառավարությունները, ապահովագրողները և վերաապահովագրողները բավարարում են ֆերմերների պահանջումները: Տարբեր ինտերնետային կայքերում բերված են վիճակագրական տվյալներ, որոնց հիման վրա կազմվել է Աղյուսակ 1-ը, որը հնարավորություն է տալիս պատկերացնել գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրման ծավալները աշխարհի տարբեր երկրներում XXI դարի սկզբում:

Ինչպես երևում է բերված աղյուսակից, ԳԿ ժամանակակից ապահովագրման շուկան գնահատված է 8.38 մլրդ դոլլար ապահովավճարումներով: Այս ծավալի 5.272 մլրդ կամ 62.9 %-ը ծախսվում են ԱՄՆ-ում, իսկ 11.87 %-ը Կանադայում: Այսօրվա դրությամբ այդ երկու խոշորագույն հյուսիս-ամերիկյան երկրներում առաջարկվում են ԳԿ ապահովագրման երեք հիմնական պոլիսներ (ապահովագրեր) մուլտիռիսկ, ապահովագրություն կարկուտից և ապահովագրություն անվանացված ռիսկերից: Մուլտիռիսկային ապահովագրությունն ապահովում է ընդհանուր ապահովագրի ամենամեծ տոկոսը և ծածկում է կորուստները, որոնք ծագել են բոլոր տեսակի բնական աղետներից, այդ թվում երաշտից և հեղեղներից:

Ինչ վերաբերվում է ապահովագրական գործընթացին ՌԴ-ում, որպես ելակետ պետք է ընդունել ՌԴ կառավարության 2001 թ. N 758 որոշումը, որով նախատեսվել էր գյուղապրանքներ արտադրողներին ֆեդերալ բյուջեից տալ 50% դրամական նպաստ՝ որպես ապահովագումար: Ընդ որում, այդ գումարները պետք է փոխանցվեն անմիջապես ապահովագրական կազմակերպություններին, ինչը կբացառի փողեր լվանալու տարբեր շարժառիթներն ու հնարավորությունները:

Այդ իսկ պատճառով ՌԴ գյուղ.նախարարությունը 2004 թ. մայիսի 26 N 298 հրամանով պարտադրեց ապահովագրած անձերին ապահովագրողներին փոխանցել ամբողջ ապահովագրման գումարը, որից հետո միայն նրանք ֆեդերալ բյուջեից կստանային ծախսված գումարների կեսը:

Ապահովագրումների ծավալների գնահատումը աշխարհի տարբեր երկրներում: Աղյուսակ 1.

Երկրներ	Ապահովագրումներ		Վերաապահովագրումներ	
	Մլն.դոլար	%	Մլն.դոլար	%
ԱՄՆ	4.600	63.53	672	58.95
Կանադա	900	12.43	95	8.333
Իսպանիա	550	7.596	12	1.053
Իտալիա	350	4.834	150	13.158
Ֆրանսիա	300	4.143	60	5.263
Գերմանիա	200	2.762	30	2.631
Չարավ. Աֆրիկա	100	1.381	47	4.123
Ավստրալիա	100	1.381	50	4.384
Չինաստան	80	1.105	4	0.551
Չարավ. Կորեա	60	0.838	20	1.754
Ընդամենը	7.240	100	1.140	100

Նույն նախարարության 2005 թ. ապրիլ ամսի N 54 հրամանի 2006 թ. մարտ ամսի N 83 հրամանի համաձայն պետությունը իր վրայից հանեց 50% կոշտ դրամական նպաստի վճարումը, ինչը ամրապնդեց 2007 թ. ապրիլ ամսին ՌԴ կառավարության N 254 որոշման մեջ, որով մտցվեցին որոշակի փոփոխություններ «Գյուղական բնակավայրերի զարգացման մասին» ՌԴ օրենքի այն մասում, որը վերաբերվում էր ապահովագրական գործընթացին: Մասնավորապես դրամական օժանդակությունը ՌԴ սուբյեկտներին պետք է տրվի 40%-ի չափով այն գումարից, որը վճարել են ապրանք արտադրողները: Համաձայն Ա. Վ. Նիկիտինի, այդ նորարարությունը քննադատվեց ինչպես գիտնականների, այնպես էլ ապահովագրողների և ապահովագրվողների կողմից, քանի որ պետական օժանդակությունը պետք է նվազեցներ ծախսերը, այդ նպատակների վրա, այլ ոչ թե բերեր դրանց աճին:

Ինչպես երևում է ՌԴ փորձից, ապահովագրումը գյուղատնտեսությունում միջոցառումների համակարգ է, որը հնարավորություն է տալիս ստեղծել դրամական (ապահովագրական) ֆոնդ, որից կարելի է փոխհատուցել կորուստները, որոնք ծագում են տարերային աղետներից, դժբախտ պատահարներից և այլ իրավիճակներից:

ՀՀ ապահովագրման շուկան 2005 թ. դրությամբ շարունակվում էր մնալ միակը ԱՊՀ երկրներում, որտեղ բացակայում էին ապահովագրման պարտադիր ձևերը: Համաձայն Լ.Մամիկոնյանի, որպես ելակետային կետ կարելի է համարել 19 դեկտեմբերի 1996 թ., երբ առաջին անգամ ընդունվեց «Ապահովագրման մասին» ՀՀ Օրենքը:¹ Օրենքն ընդունվելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կազմում ստեղծվեց Ապահովագրական տեսչություն, որին կարճ ժամանակում հաջողվեց ապահովագրական գործունեությամբ զբաղվելու 85 լիցենզիա ունեցող ֆիրմաների քանակը կրճատել մինչև 22-ի: 2004թ. ընդունվեց ՀՀ նոր Օրենք, որը կրելով նույն անվանումը, հիմնական շեշտը դնում էր ապահովագրմանը դիմող անձների և կազմակերպությունների շահերի պաշտպանությանը:

Այսօրվա դրությամբ ՀՀ ապահովագրական գործունեության Ընդհանուր պատկերի մասին կարելի է եզրակացություն անել աղյուսակ 2-ում բերված տվյալներից: Ինչպես երևում է աղյուսակից, 2012 թ. առաջին կիսամյակում ՀՀ ապահովագրողները հավաքել էին 14,3 մլն դոլլար, որը 250 ավելի էր, քան 2007 թ. նույն ժամանակահատվածում: Եվ դա կատարվել է այն պայմաններում, երբ ապահովագրությամբ զբաղվող ընկերությունների քանակը 18-ից նվազել է (2006 թ.) մինչև 7 (2012 թ.): Պետք է նշել, որ վերջին տարիների ընթացքում չի հրապարակվում ոչ մի տեղեկատվություն

**ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական ցուցանիշները
Աղյուսակ 2**

<i>Ցուցանիշներ</i>	<i>01.07.2006</i>	<i>01.07.2007</i>	<i>01.07.2012</i>	<i>Փոփ. %</i>
<i>Լիցենզավորված ապահովագրական գործունեությամբ ֆիրմաների քանակը</i>	<i>18</i>	<i>11</i>	<i>7</i>	<i>-61,1</i>
<i>Ֆինանսական ցուցանիշներ, վնաս(-) մլն\$</i>	<i>-62,08</i>	<i>0,692</i>	<i>5,8</i>	<i>838</i>
<i>Ապահովագրական վճարումներ, մլն\$</i>	<i>3,399</i>	<i>5,737</i>	<i>14,3</i>	<i>250</i>

1. Л.Мамиконян "Русский полис" N003 стр.22-24 от17.03.2005
<http://www.openmarket.ru/News AM/News AMShow asp? ID=33710>

գյուղատնտեսական գործունեության ապահովագրման մասին, մինչդեռ միջին տարեկան կտրվածքով այդ ճյուղը կրում է կորուստներ 12-17 մլրդ դրամի չափով:

Չնայած նրան, որ 2007 թ. ապրիլ ամսին ՀՀ-ում ընդունվեց նոր օրենք «Ապահովագրման և ապահովագրական գործունեության մասին», որում նախատեսված էր մտցնել պարտադիր ապահովագրման մի քանի ձևեր, գյուղատնտեսությունն այսօր չի ընդգրկվել այդ գործունեության մեջ: Որպես հնարավոր ելք դուրս գալու ստեղծված իրավիճակից, գյուղատնտեսության նախարարության առաջին փոխնախարար Ս. Ավետիսյանը դեռ 2007 թ. առաջարկել է գյուղատնտեսական ռիսկերի փոքրացման երկու ուղղություն՝

1. Ձևավորել համապատասխան ենթակառուցվածքներ, մասնավորապես, ներդնել հակակարկտային կայաններ.

2. Հաջորդաբար զարգացնել ոռոգման համակարգը:²

Որպես գերխնդիր Ս. Ավետիսյանը նշում է ապահովագրությունը՝ հիշեցնելով, որ աշխարհով մեկ ապահովագրությունը կատարվում է մասնավոր ֆիրմաների միջոցով, իսկ պետությունը միայն աջակցում է այդ գործընթացին: Որպես առաջին քայլ այդ ուղղությամբ առաջարկվում է իրագործել փոխադարձ ապահովագրություն: Վերջինս իրագործվելու է գյուղատնտեսության և պարենի աջակցության կազմակերպության (FAO)-ի միջոցով, որը փորձնական կարգով Սյունիքի մարզի 9 գյուղերում փորձելու է ներդնել փոխադարձ ապահովագրության մեխանիզմը:

Առաջին փուլում ապահովագրումը որոշվել է կատարել անասնաբուժության ոլորտում, մասնավորապես, ապահովագրել անասունների գլխաքանակը: Վարչական ծախսերն իր վրա կվերցնի համայնքի անդամների կողմից ստեղծված ապահովագրման ֆոնդը, որից անհրաժեշտության դեպքում կվերցվեն կորուստի մատուցման գումարները: Ռիսկերի բացակայության դեպքում միջոցները կկուտակվեն այդ ֆոնդում: Համակարգի ներդրման համար FAO-ն պատրաստ է հատկացնել 70 հազ. դոլար:

Ատենախոսության երկրորդ «Ռիսկերի կառավարման և գնահատման մեթոդոլոգիական հարցերը» գլխում ուսումնասիրվել են այնպիսի հարցեր, ինչպիսին են ռիսկերի կառավարման գործընթացը գյուղատնտեսական կազմակերպություններում, գյուղատնտեսական կազմակերպությունների ռիսկերի քանակական գնահատման ցուցանիշները և ռիսկերի գնահատումը կազմակերպության գործունեության ֆինանսական գործակիցների հիման վրա:

Ծանոթանանք այդ գործակիցների և նրանց վրա դրված սահմանափակումների հետ:

2. С.С.Аветисян “Нигде сельское хозяйство не развивается без субсидирования” ДЭ N05(711) от 9.02.07

1. Փոխնառու և սեփական միջոցների հարաբերության գործակիցը ցույց է տալիս, թե ձեռնարկության գործունեության որ մասն է ֆինանսավորվում սեփական միջոցների հաշվին, իսկ որը՝ փոխառությունների հաշվին

$$K_{\text{փմ}} = \frac{\text{փոխառության կապիտալ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{\Phi\text{Կ}}{\text{ՄԿ}} \quad (1)$$

Այս գործակիցը ունի հատուկ նշանակություն ձեռնարկության համար, որքան դա բարձր է, այսինքն բարձր են ձեռնարկության պարտքերի հանձնարարությունները, այնքան մեծ է սնանկության ռիսկը: Այս գործակցի օպտիմալ նշանակությունը պետք է լինի մեկից փոքր:

2. Ձեռնարկության ֆինանսական կայունության մեկ ուրիշ ցուցանիշը՝ սեփական շրջանառու միջոցների շարժունակության գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$K_{\text{շարժ}} = \frac{\text{սեփական շրջանառու միջոցներ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{\text{ՄՇՄ}}{\text{ՄԿ}} \quad (2)$$

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ձեռնարկության սեփական միջոցների որ մասն է ներդրված ամենաշարժունակ ակտիվների մեջ: Որքան մեծ է այս գործակիցը, այնքան ձեռնարկությունը ավելի շատ ունի հնարավորություն աշխատել սեփական միջոցներով: Այս գործակցի նորմալ արժեքը պետք է գերազանցի 0,5:

3. Ձեռնարկության ֆինանսական անկախության գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$K_{\text{անկ}} = \frac{\text{սեփական կապիտալ}}{\text{կապիտալ ընդհանուր գումար}} = \frac{\text{ՄԿ}}{\text{ԸԳ}} \quad (3)$$

Այս գործակիցը բնութագրում է ձեռնարկության գործարար ակտիվությունը և ցույց է տալիս սեփականատիրոջ միջոցների այն մասը, որը նա ներդրել է ձեռնարկության ունեցվածքի ընդհանուր արժեքի մեջ: Դա կարևոր նշանակություն ունի վարկատուների համար, քանի որ որոշում է նրանց ներդրված կապիտալի ռիսկի աստիճանը: Այս գործակցի համար օպտիմալ նշանակությունը պետք է լինի 0,5 մակարդակի վրա, բայց կարող է լինել ավելի փոքր, եթե արտադրության ընդլայնելու համար ընդգրկվում են երկարաժամկետ դրամական վարկեր: Որքան բարձր է սեփական կապիտալի մասը ձեռնարկության կողմից ներդրված դրամական միջոցների ընդհանուր ծավալում, այնքան բարձր է ձեռնարկության ֆինանսական անկայունությունը:

Այս գործակցի հակառակ գործակիցը կոչվում է ֆինանսական կախվածության գործակից և հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$K_{\text{կախ}} = \frac{\text{Կապիտալի ընդհանուր գումար}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{\text{ԸԳ}}{\text{ՍԿ}} \quad (4)$$

4. Սեփական շրջանառու միջոցների ապահովման գործակիցը որոշվում է սեփական շրջանառու միջոցների, պաշարների և ծախսերի մեծության հարաբերությամբ

$$K_{\text{ապահ.}} = \frac{\text{Սեփական շրջանառու միջոցներ}}{\text{Նյութական պաշարներ և ծախսեր}} = \frac{\text{ՍԸԿ}}{\text{ՆՊԾ}} \quad (5)$$

Այս գործակցի մեծությունը պետք է լինի մեծ կամ հավասար 0,1: Նա ցույց է տալիս սեփական շրջանառու միջոցների առկայությունը, որոնցով և ապահովվում է ձեռնարկության ֆինանսական կայունությունը:

1. Ինվեստիցիաների ծածկելու գործակիցը բնութագրում է սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների մասը ձեռնարկության ակտիվների ընդհանուր գումարում

$$K_{\text{իծ}} = \frac{\text{Սեփական կապիտալ + երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Կապիտալի ընդհանուր գումար}} = \frac{\text{ՍԿ + ԵՊ}}{\text{ԸԳ}} \quad (6)$$

Այս գործակցի նորմալ մշանակությունը կազմում է մոտավորապես 0,9, իսկ կրիտիկականը ցածր է 0,75-ից:

Հայտնի, է որ ֆինանսական ռիսկերի վերլուծության համար կարևոր տնտեսագիտական մշանակություն ունի ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության գնահատումը: Կարելի է առանձնացնել շահութաբերության երկու խումբ ցուցանիշներ, որոնցում շահույթը համադրվում է կամ ձեռնարկության ռեսուրսների հետ (կապիտալ, նյութական ռեսուրսներ), կամ էլ շահույթը հարաբերվում է այնպիսի ցուցանիշների հետ, որոնք բնութագրում են ձեռնարկության միասնական եկամուտը: Տարբերվում են շահութաբերության երկու խումբ գործակիցներ՝ կապիտալի շահութաբերություն և վաճառքների շահութաբերություն: Կապիտալի շահութաբերության համար առաջարկվում է հաշվարկել չորս հիմնական ցուցանիշներ՝ միասնական կապիտալի շահութաբերություն, սեփական կապիտալի շահութաբերություն, պարտավորական կապիտալի շահութաբերություն և ակտիվների շահութաբերություն: Նշենք, որ այս ցուցանիշների տատանման սահմանների մասին ուսումնական ձեռնարկում ոչինչ չի ասվում:

Այդ ցուցանիշների մեծությունը որոշելով կարելի է դասել ուսումնասիրվող ձեռնարկության այս կամ այն ռիսկային դասին: Համեմատելով այս գործակիցների թվային մեծությունները կարելի է նրանց բաշխել ըստ ռիսկերի հետևյալ խմբերի: (Աղյուսակ 3)

Ամփոփելով վերը ասվածը կարելի է պնդել, որ այսօր կան որոշակի մեթոդաբանական մոտեցումներ, որոնք թույլ են տալիս հաշվարկել գյուղատնտեսական օբյեկտների գործունեության արդյունավետությունը:

Ձեռնարկության բաշխումը ռիսկային խմբերի, կախված ֆինանսական ցուցանիշների մեծությունից
Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	I խում (ցածր)	II-III խումը (ընդունելի)	IV-V խումը (բարձր)
Ընթացիկ իրացման գործակից	$K > 2$	$1 < K < 2$	$K < 1$
Արագ իրացման գործակից	$K > 0,6$	$0,2 < K < 0,6$	$K < 0,2$
Ինքնավարության գործակից	$K > 50\%$	$20\% < K < 50\%$	$K < 20\%$
Վճարումների ծածկույթի գործակից	$K > 2$	$1 < K < 2$	$K < 1$

Մասնավորապես, կարելի է օգտվել գրականությունում³ նկարագրված ձեռնարկության գործունեության արդյունավետությունը և հետևաբար ռիսկայնությունը կանխատեսելու համար առաջարկված երեք մեթոդները՝

1. Կանխատեսում սահող միջինների մեթոդ.
2. Կանխատեսում էքսպոնենցիալ հարթեցման մեթոդ.
3. Ռեգրեսիոն կանխատեսում:

Նշենք, որ ատենախոսությունում քննարկվող ձեռնարկության ուսումնասիրության համար առավել արդյունավետ են 1 և 2 մեթոդները, որովհետև դրանք չեն պահանջում երկարաժամկետ ուսումնասիրված տվյալների առկայություն, մինչդեռ 3-րդ մեթոդը առավել արդյունավետ է մեծաթիվ ժամանակային շարքերի առկայության դեպքում:

Ծանոթանաք այդ մեթոդների հետ:

1. Սահող միջինների մեթոդի իմաստը նրանում է, որ ժամանակային շարքի վերջին n տվյալներն առավել կարևոր են հաջորդ ցուցանիշների հաշվարկման համար:

Այլ կերպ ասած, եթե ժամանակի t ընթացիկ պահին վերջին n ցուցանիշները եղել են $y_{t-n+1}, y_{t-n+2}, \dots, y_{t-n}$, ապա $t+1$ պահի համար կանխատեսվող ցուցանիշը հաշվվում է՝

$$Y_{t+1} = \frac{y_{t-n+1}, y_{t-n+2}, \dots, y_{t-n}}{n} \quad (7)$$

Նշենք, որ n թվի ընտրության համար հստակ կանոններ գոյություն չունեն: Կարճաժամկետ գործընթացների ուսումնասիրության դեպքում

3.АфанасьевВ. Н., ЮзбашевМ. М. Анализ временных рядов и прогнозирование: Учебник , “ Финансы и статистика”, 2001г. , 228 стр.

պրակտիկորեն n -ը վերցնում են 2-ից 10 միջակայքում, այսինքն կիրառելով այս մեթոդը՝

$$2 \leq n \leq 10 \quad (8)$$

Կանխատեսման էքսպոնենցիալ հարթեցման մեթոդի էությունը նրանում է, որ տարբեր տարիների ցուցանիշները հաշվի են առնվում որոշակի կշռով, մինչդեռ նախորդ մեթոդում (սահող միջինների) բոլոր ցուցանիշները հավասար կշռով էին վերցվում: Մասնավորապես, այս մեթոդում առավել կշռային գործակից տրվում է ամենավերջին ցուցանիշին:

Նշանակենք α -ով հարթեցման գործակիցը ($0 < \alpha < 1$) և դիցուք ենթադրենք, որ հայտնի են ժամանակային շարքի մինչև t -րդ տարվա ցուցանիշները՝ y_1, y_2, \dots, y_t : Այդ դեպքում հաջորդ $t+1$ -րդ պահի համար y_{t+1}^* ցուցանիշը կանխատեսվում է հետևյալ բանաձևի օգնությամբ

$$y_{t+1}^* = \alpha \cdot y_t + \alpha \cdot (1-\alpha)y_{t-1} + \alpha \cdot (1-\alpha)^2 y_{t-2} + \dots + \alpha \cdot (1-\alpha)^{t-1} \cdot y_1 \quad (9)$$

Ինչպես տեսնում ենք $y_t, y_{t-1}, y_{t-2}, \dots, y_1$ -ի գործակիցները նվազում են, դրանով իսկ վերջին ցուցանիշները (ըստ ժամանակի) մասնակցում են մեծ կշիռներով:


y_{t+1}^* -ի հաշվարկման համար օգտագործվող բանաձևը կարելի է գրել ավելի կոմպակտ տեսքով՝

$$y_{t+1}^* = \alpha \cdot y_t + \{ \alpha \cdot (1-\alpha) y_{t-1} + \alpha \cdot (1-\alpha) y_{t-2} + \alpha \cdot (1-\alpha)^2 y_{t-3} + \dots \} = \alpha \cdot y_t + (1-\alpha) \cdot y_t^* \quad (10)$$

Այսպիսով, y_{t+1}^* -ը կարելի է հաշվել ունենալով y_t^* -ի մեծությունը վերը նշված ռեկուրենտ բանաձևերի օգնությամբ: Ըստ այս բանաձևի, հաշվարկները սկսում են նրանից, որ բաց է թողնվում y_1^* ցուցանիշը $t=1$ դեպքի համար և $t=2$ դեպքում վերցվում է $y_2^* = y_1$: Հաշվարկները, որոնք արվել են (7)-(10) բանաձևերի օգնությամբ, բերված են ատենախոսության երրորդ գլխում:

Ատենախոսության երրորդ «Ռիսկերի ապահովագրության կառավարման հիմնական ուղղությունների մշակումը գյուղատնտեսական կազմակերպությունում» գլխում որոշվել է կազմակերպության ֆինանսական կայունությունն թռչնաբուժական արտադրության օրինակով, կատարվել է կազմակերպության կարևորագույն արտադրամասի գործունեության արդյունքների կանխագուշակում և մշակվել է Արզնու Տոհմային «ԹՏԽ» ԲԲԸ-ի ռիսկերի կառավարման ենթահամակարգը:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը կազմակերպության կարևորագույն բնութագրերից մեկն է և փոխկապված է կազմակերպության մրցակցային ներուժի, արտադրության զարգացման մակարդակի և դինամիկայի, մարքեթինգային գործունեության զարգացման մակարդակի հետ (գծանկար 1):



Գծանկար 1. Բաղադրիչներ, որոնք ազդում են կազմակերպության ֆինանսական կայունության վրա

ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի բարեփոխումը ստեղծում է որոշակի սոցիալ-տնտեսական նախադրյալներ գյուղատնտեսական ձեռնարկության ֆինանսական կայունության վրա՝ թույլ տալով այդ կազմակերպություններին արագ հարմարվել շուկայական փոփոխվող իրավիճակին:

Կազմակերպության ֆինանսական վիճակը, նրա կայունությունը և հաստատությունը կախված են նրա արտադրական, առևտրական և ֆինանսական գործունեության արդյունքներից:

Ատենախոսությունում օգտագործվել են Արզնու տոհմային «ԹՏԽ» ԲԲԸ-ի վերջին հինգ տարիներին ՀՀ ազգային վիճակագրական վարչության ներկայացրած ձեռնարկության տնտեսական գործունեությունը նկարագրող տարեկան հաշվետվություններից վերցված թվերը, որոնք բերված են հավելվածում: Այնուհետև կատարվել է ֆինանսական կայունությունը նկարագրող առանձին խմբերի հաշվարկներ: Օրինակ հայտնի, որ իրացման գործակիցների շարքին են դասվում ընթացիկ իրացման գործակիցը - $K_{\text{ըր}}$, արագ իրացման գործակիցը - $K_{\text{աիր}}$ և մաքուր շրջանառու կապիտալի մեծությունը: Այս երեք ցուցանիշների հաշվարկների արդյունքները բերված են Աղյուսակ 4-ում:

Ընթացիկ իրացման գործակիցը (Current Ratio) արտահայտում է կազմակերպության վճարելու ունակությունը իր շրջանառու կապիտալից կարճաժամկետ վերցված պարտավորությունները: Արտասահմանյան պրակտիկայում անբավարար է ճանաչվում այն գործակիցը, որի մեծությունը փոքր է 2-ից: Ռուսաստանյան պրակտիկայում դա պետք է գերազանցի 1 թիվը: Օպտիմալ է հաշվվում այն տիրույթը, որում գործակցի մեծությունը տատանվում է 1-ից մինչև 3:

Հայտնի է, որ ընթացիկ իրացման գործակցի շատ բարձր մեծությունները վկայում են այն մասին, որ ձեռնարկությունը պահպանում է չափազանց մեծ ընթացիկ ակտիվներ և չի օգտագործում դրանց զարգացման համար՝ կատարելով նոր մշակումներ և երկարատև ներդրումներ:

Իրացման գործակիցների դինամիկան յուրաքանչյուր տարվա 01.01.2007-01.01.2012 Աղյուսակ 4

Ցուցանիշի անվանումը	2007	2008	2009	2010	2011
<i>Ընթացիկ ակտիվներ (220)</i>	1534346	1885768	2059625	2056136	2061536
<i>Ընթացիկ պարտավորություններ (490)</i>	134305	771534	1236523	1353698	682633
$1.0 \leq K \leq 3$	11,424	2,444	1,666	1,519	3,02
<i>Ապրանքանյութական պաշարներ (220)-(090)-(100)-(130)</i>	305044	306564	606667	489545	286659
$0.2 \leq K \leq 0.6$	2,271	0,397	0,490	0,361	0,42
<i>Մաքուր շրջանառու (աշխատող) կապիտալ (220) - (490)</i>	1400004	1114229	823102	702438	1378903

Ընթացիկ իրացման գործակիցը (Current Ratio) արտահայտում է կազմակերպության վճարելու ունակությունը իր շրջանառու կապիտալից կարճաժամկետ վերցված պարտավորությունները: Արտասահմանյան պրակտիկայում անբավարար է ճանաչվում այն գործակիցը, որի մեծությունը փոքր է 2-ից: Ռուսաստանյան պրակտիկայում դա պետք է գերազանցի 1 թիվը: Օպտիմալ է հաշվվում այն տիրույթը, որում գործակցի մեծությունը տատանվում է 1-ից մինչև 3:

Հայտնի է, որ ընթացիկ իրացման գործակցի շատ բարձր մեծությունները վկայում են այն մասին, որ ձեռնարկությունը պահպանում է չափազանց մեծ ընթացիկ ակտիվներ և չի օգտագործում դրանց զարգացման համար՝ կատարելով նոր մշակումներ և երկարատև ներդրումներ:

Հաստատվում է Աղյուսակ 4-ում բերված $K_{\text{գործակցի}}$ մեծությամբ (երրորդ տող): Թվերը ստացվել են, երբ ձեռնարկության դրամական միջոցների մեծությունը (տող 220) բաժանվել է ընթացիկ պարտավորությունների (տող 490) վրա: Գործակցի տատանման դինամիկայից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում միայն 2007 թ հետո, երբ կազմակերպությունում կատարվեցին խոշոր ներդրումներ, մասնավորապես Շվեյցարիայից և Ավստրիայից ձեռք բերվեցին բարձր կաթնատվություն ունեցող կովեր, այդ գործարքի արդյունքով կազմակերպության իրացման գործակիցը մտավ թույլատրելի սահմանների մեջ:

Այնուհետև ատենախոսությունում հաշվարկվել են արագ իրացման գործակիցը (Quick Ratio), մաքուր շրջանառու (աշխատող) կապիտալը (Net Working Capital), ինքնավարության գործակից (Autonomy Ratio), ֆինանսական կախվածության գործակիցը (Dependence Ratio), պարտավորություններ և սեփական միջոցների հարաբերություն (Debt to Equity Ratio), վճարումների ծածկման գործակից (Coverage Ratio), շահութաբերության գործակիցը

(Operating Profit Margin), շահագործական ծախսերի գործակիցը (Operating Cost Margin), շահավետության գործակիցը (Net Profit Margin), ակտիվների շահավետությունը (Return on Assets), սեփական կապիտալի (ինվեստիցիաների) շահավետությունը:

Ամփոփելով ստացված արդյունքները, ատենախոսությունում փորձ է արվել որոշել, թե որ ռիսկային խմբին է դասվում ուսումնասիրվող ձեռնարկությունը: Հայտնի է, որ

1. Եթե ընթացիկ իրացման գործակիցը մեծ է 2-ից, ապա ձեռնարկությունը դասվում է ցածր ռիսկային խմբին: Մեր դեպքում $1,519 \leq K_{\text{ըիր}} \leq 11.424$, այսինքն ռիսկայնությունը ցածր է:

2. Արագ իրացման գործակիցն ուսումնասիրվող կազմակերպությունում տատանվում է $0.361 \leq K_{\text{աիր}} \leq 2.271$, այսինքն ուսումնասիրվող ժամանակահատվածի առաջին տարվա ընթացքում ձեռնարկությունը կարելի է դասել բարձր ռիսկի խմբին, իսկ վերջին չորս տարին՝ ընդունելի:

3. Եթե ինքնավարության գործակիցը գերազանցում է 50%-ը, ապա կազմակերպությունը դասվում է ցածր ռիսկայնություն ունեցողների թվին: Մեր դեպքում ուսումնասիրվող հինգ տարիների ընթացքում միայն վերջին երկու տարիներին այս ցուցանիշը գերազանցեց վերին շեմը, և կազմակերպությունը մտավ բարձր ռիսկայնություն ունեցող շարքի մեջ:

Համեմատենք ստացված արդյունքները կազմակերպության արդյունավետ աշխատանքի գործակցի մեծության հետ: Գրականության մեջ ձեռնարկության արդյունավետ աշխատանքը գնահատելու համար առաջարկվում է օգտագործել հետևյալ բանաձևը

$$E = \frac{mu(1+k)^n}{1+mp} - 1 \quad (11)$$

որտեղ k - շահույթի նորման է, որը հաստատուն է բոլոր ձեռնարկությունների համար:

u – նյութական հոսքի օգտակարությունը $u = 1 - R$, որտեղ R -ը ռիսկի գործակիցը

m – արտադրական ցիկլերի քանակը, n -ստորաբաժանումների քանակը, p -դրամական միջոցների այն մասը, որը կատարվում է արտադրական գործընթացը կազմակերպելու համար (աշխատավարձ, հիմնական միջոցների ամորտիզացիա և այլն): Քանի որ աշխատանքում բոլոր հաշվարկները կատարվել են «Արգնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն գործունեության 2007-2011 թթ. ընթացքում, ապա բանաձև 3.1-ում $m=4$, իսկ $n=1$: Եթե արդյունավետությունը՝ $P=0.3$, $K=0.3$, իսկ $U=0.7$, հետևաբար.


4. В.И.Лойко, Н.В.Ефанова Количественные модели и методики оценки рисков в агропромышленных интегрированных производственных системах. Научный журнал КубГАУ N40(6), 2008 года

5. <http://ej.kubargo.ru/2008/06/pdf/12.pdf>

$$E = \frac{4 \cdot 0.7(1 + 0.3)}{1 + 4 \cdot 0.3} - 1 \approx 0.65 \quad (12)$$

Ինչը թույլ է տալիս պնդել, որ կազմակերպությունը ցածր ռիսկայնությունից, և բարձր արդյունավետությունից վերջին երկու տարիներին իջեցրել է իրեն բնորոշ ցուցանիշները:

Արզնու տոհմային «ԹՏԽ» ԲԲԸ-ն, լինելով ՀՀ գյուղատնտեսական սեկտորի առաջատար ձեռնարկություններից մեկը, ինչպես և այլ ձեռնարկություններ, իր գործունեության ընթացքում հանդիպում էն տարբեր տեսակի ռիսկերի, որոնք կրում են արտադրական, ֆինանսական, իրավաբանական, սոցիալ և քաղաքական բնույթ: Այդ ռիսկերի առկայությունը չպետք է ազդի ձեռնարկության ռազմավարական նպատակներին հասնելու գործընթացի վրա:



Գծանկար 2. Ձեռնարկության ֆինանսական գործունեության և ռիսկերի կառավարման բլոկ-սխեմա

Դրա համար ատենախոսությունում փորձ է արվել ձեռնարկությունում գործող առկա տնտեսական ցուցանիշների հաշվարկման և կառավարման համակարգի բլոկ սխեմայում (գծանկար 2) ավելացնել նոր ստորաբաժանում, որը խառը մարքեթինգային վերլուծությունների արդյունքների հիման վրա պետք է զբաղվի այն ռիսկերի նույնականացումով, կանխումով և մինիմիզացումով, որոնք սպառնալիքներ են ներկայացնում բիզնեսին և ձեռնարկության հեղինակությանը, անձնակազմի առողջությանը, բաժնետերերի և ներդրողների շահերին. կարճ ասած իրագործի օպտիմալ ռազմավարություն:

Քանի որ օպտիմալ ռազմավարության տեսակի ընտրությունը պետք է կայացնի որոշում ընդունող անձը (ՈԸԱ) պարտադիր մասնակցությամբ, ատենախոսությունում մշակված է կառավարման համակարգի մի այնպիսի սխեմա, որը օգնում է ՈԸԱ-ին ընդունել ճիշտ որոշումներ: Այդպիսի կառավարման տեսակը ատենախոսությունում կոչվել է ռիսկերի մտավոր կառավարչական համակարգ (ՌՄԿՅ): Որոշումներ ընդունող անձի տեղն ու դերը ՌՄԿՅ –ում ներկայացված են գծանկար 3 –ում:



Գծանկար 3. Ռիսկերի մտավոր կառավարման համակարգի սխեմա

Ձեռնարկության ռիսկային ռազմավարությունը իրագործելու համար իրավիճակների վերլուծության բլոկում հավաքում են այնքան ՈԸԱ-եր, որքան ռազմավարական ստորաբաժանումներ կան ուսումնասիրվող ձեռնարկությունում: Ընտրելով ստեղծված իրավիճակին համապատասխանող մոդել և օգտագործելով տվյալների բազայում կուտակված անհրաժեշտ ելակետային տվյալները i -րդ ՈԸԱ -ը ($i=1, n$) օպտիմիզացիոն խնդրի լուծման արդյունքներով որոշում է ընդունվում ռիսկային ռազմավարության կիրառման մասին:

Կատարված հետազոտությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները՝

Կատարված հետազոտությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները՝

1. Ապահովագրությունը, լինելով ռիսկերի կառավարման հիմնական մեթոդներից մեկը, կարող է թույլ տալ գյուղատնտեսական ձեռնարկություններին խուսափել զգալի կորուստներից ապահովագրական որոշակի ծախսեր անելով:

2. ՀՀ գյուղատնտեսության մեջ ապահովագրական շուկան գտնվում է կազմավորման փուլում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ 1991թ. չեղյալ համարվեց պետական մենաշնորհը ապահովագրական գործունեության վրա, առ այսօր չեն գտնվել ապահովագրության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանեն փոփոխված տնտեսական իրավիճակին:

3. Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման գործընթացի վերլուծությունը վկայում է, որ ՀՀ ամենավիճելի հարցը ապահովագրության ձևն է: Ինչպես ազգային, այնպես էլ արտասահմանյան փորձը վկայում են այն մասին, որ ապահովագրական առկա ձևերը հեռանկարային չեն, քանի որ չեն ապահովում զգալի ապահովագրական պաշարներ այն դեպքերի համար, երբ անհրաժեշտություն է ծագում հատուցել մասսայական կորուստները:

4. Առաջարկվել է կանխագուշակման երեք մեթոդներից գյուղատնտեսական ձեռնարկություններում օգտագործել կանխատեսման էքսպոնենցիալ մեթոդը, որը տալիս է ավելի ստույգ արդյունքներ:

5. Ձեռնարկության ռիսկերի կառավարումը ենթադրում է, որ պետք է ստեղծվեն այնպիսի ենթահամակարգեր, որոնցում կատարվում է կառավարչական որոշումների վերլուծություն և ընտրվում են այն տարբերակները, որոնք ապահովում են ձեռնարկության գործունեության ֆինանսական կայունությունը:

6. Եթե գյուղատնտեսական ձեռնարկության գործունեությունը կրում է բազմաճյուղային բնույթ, այսինքն արտադրվում են մի քանի տեսակի գյուղատնտեսական ապրանքներ, ապա շեշտը պետք է դրվի այն արտադրության վրա, որն ապահովում է առավելագույն շահույթ: Ատենախոսությունում որպես այդպիսին ընտրված է թռչնաբուծության արտադրությունը, որը ապահովում է կազմակերպության շահույթի 85-90%:

7. Մշակված է ձեռնարկության ֆինանսական գործնեության և ռիսկերի կառավարման այնպիսի բլոկ-սխեմա, որի մեջ ընդգրկված է ռիսկերի կառավարման բլոկ, որը թույլ է տալիս հաշվարկել անասնաբուծական, լոգիստիկ և ձեռնարկության ռիսկերը:

8. Առաջարկված է մարքեթինգային բաժնի կազմակերպչական կառուցվածքի այնպիսի սխեմա, որի հիմքում դրված են ֆունկցիոնալ ապրանքային արտադրական հատկանիշներ:

Ատենախոսության հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի հետևյալ հրապարակություններում

1. Ս.Լ.Ղանթարջյան, Ռ.Աբրահամյան – Ռիսկերի կառավարման փորձը զարգացած երկրների գյուղատնտեսությունում: Տեղեկագիր 2011 Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր. ԵՊՀ հրատ., 2011, 402- 409 էջ:

2. Ռ.Աբրահամյան - Գյուղատնտեսության ապահովագրության գործընթացի զարգացումը ՀՀ-ում Երևանի «Անանիա Շիրակացի» Միջազգային հարաբերությունների համալսարան Երևան 2011, 152-156 էջ

3. Ռ.Աբրահամյան - «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի ռիսկերի կառավարման ենթահամակարգի մշակումը: Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա, ապրիլ 2011, 50-51 էջ:

АБРААМЯН РИМА АКОПОВНА

“Организация управления рисками на сельскохозяйственном предприятии (на примере “Арзнийское племенное ПГС” ООО)

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02: “Экономика, управление хозяйством и его отраслями”

Защита состоится 12 июля 2013 года в 13:30 на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике Ереванского государственного университета по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Анализ современного состояния сельского хозяйства РА показал, что эта отрасль оказалась уязвимой не только из-за кризисных явлений, охвативших практически все отрасли народного хозяйства, но и из-за специфических природных явлений, оказывающих решающее влияние на эффективность сельскохозяйственного производства.

В этих условиях перед предпринимателями и менеджерами встает задача разработать стратегию действий в неопределенных рискованных ситуациях – стратегию управления хозяйственным риском на основе исследования факторов и источников его возникновения.

Актуальность и недостаточная разработанность этой проблемы а также необходимость ее решения с позиции рыночных отношений обусловили выбор темы, цель и задачи диссертационной работы.

В ее первой главе рассмотрены теоретические и методические вопросы управления рисками в сельском хозяйстве, во второй – методологические вопросы оценки и управления рисками, в третьей - на примере конкретного сельскохозяйственного предприятия осуществлены расчеты и даны рекомендации по управлению рисками, возникающими на этом предприятии.

В соответствии с проведенными исследованиями выданы следующие рекомендации и предложения:

- Страхование, будучи одним из основных методов управления рисками, позволяет сельскохозяйственным предприятиям избежать значительных потерь, осуществив определенные затраты на страхование.

- Рынок страхования в сельском хозяйстве РА находится в стадии становления. После распада СССР, когда в 1991 году была объявлена недействительной государственная монополия на осуществление страховой деятельности, до сих пор не найдены такие способы страхования, которые соответствовали бы изменившимся экономическим условиям.

- Анализ деятельности по страхованию сельскохозяйственных рисков свидетельствует о том, что наиболее спорным в РА является вид страхования. Как об этом свидетельствует отечественный, так и зарубежный опыт, существующие формы страхования бесперспективны, так как не обеспечивают получение достаточной страховой суммы в случае, если возникает необходимость возмещения массовых потерь.

- Из изученных в работе трех методов прогнозирования потерь для сельскохозяйственных предприятий рекомендуется использовать экспоненциальный метод прогнозирования, который дает более точные результаты.

- Управление рисками предприятий предполагает создание таких подсистем, в которых анализируются управленческие решения и выбираются те варианты, которые обеспечивают финансовую устойчивость действующего предприятия.

- Если деятельность сельскохозяйственного предприятия имеет многоотраслевой характер, т.е. производится несколько видов сельскохозяйственной продукции, в таком случае упор надо делать на то производство, которое обеспечивает получение максимальной прибыли. В диссертационной работе в качестве такового выбрано производство яиц, которое обеспечивает получение 85-90 % прибыли предприятия.

- Разработана такая блок-схема управления финансовой деятельностью и рисками предприятия, в которую включен блок управления рисками, позволяющий рассчитывать животноводческие, логистические и предпринимательские риски.

- Предлагается такая организационная схема работы маркетингового отдела, в основе которой заложены особенности функциональной, товарной и производственной ориентации.

Rima H. Abrahamyan

“Organization of Risk Management at an Agricultural Enterprise” (by example of ‘Arzni’ Pedigree Stockbreeding Co., Ltd.)

The defense of the Dissertation will take place at 13.30 on July 12-th, 2013 at the Meeting of Specialized Council 015 of in Economics the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan Str., Yerevan, 0009, Armenia

Summary

The analysis of the current state of agriculture in the RA has shown that this industry turned out to be vulnerable not only due to crisis phenomena that affected nearly all industries of national economy, but also because of specific natural phenomena that have crucial impact on the efficiency of agricultural production.

Under such circumstances the entrepreneurs and managers face the problem of developing action strategy in uncertain risk situations – the strategy of management of economic risk on the basis of studying factors and sources of its origin.

The urgency and lack of elaboration of this problem, as well as the need to solve it from the viewpoint of market economy conditioned the selection of the subject-matter, the goals and aims of the thesis.

The 1st Chapter of the thesis is devoted to the study of theoretical and methodical issues of risk management in agriculture, the 2nd Chapter studies the methodological problems of risk evaluation and risk management, and the 3rd Chapter presents calculations by example of a specific agricultural enterprise and provides recommendations on the management of risks that can occur at the given enterprise.

In compliance with the outcome of the research the following recommendations and suggestions have been put forward:

- Insurance, being one of the main methods of risk management, allows agricultural enterprises to avoid significant losses by means of insurance costs.

- Insurance market in the agricultural sector of the RA is in the formation stage. After the collapse of the USSR in 1991, when the state monopoly aimed at the implementation of insurance activities was declared invalid, no means and methods of insurance which would correspond to the changing economic conditions have been determined so far.

- The analysis of activities aimed at insuring agricultural risks testifies that the type of insurance is the most ambiguous in the RA. The domestic as well as foreign experience has shown that the existing types of insurance lack perspective as they do not secure the realization of decent amount of money in case there is a need to compensate massive losses.

- Among the three methods of prognostics of losses for agricultural enterprises it is recommended to use the exponential method of prognostics, which provides more accurate results.

- Risk management of enterprises implies the creation of subsystems in which management decisions are analysed and the options ensuring financial sustainability of the enterprise are selected.

- If the activities of an agricultural enterprise are of diversified nature, i.e. several kinds of agricultural produce are made, the focus should be laid on the production which secures maximum profit. In the thesis we have chosen the production of eggs, which amounts to 85-90% profit of the enterprise.

- A flow chart of management of financial activities and risks, which involves a set of risk management that allows to calculate livestock, logistical and entrepreneurial risks, was developed.

- An organizational layout of activities of the Marketing Department, which rests on features of functional, commodity and production orientation, is offered.